ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » 08 2025թ. N ՄՈ/785-Ա

ք. Արմավիր

## « ԱԿՆԱԼՃԻ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի օգոստոսի 6–ի N ՄՈ/771-Ա և օգոստոսի 8–ի N ՄՈ/772-Ա որոշումները, «Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ն. Ալավերդյանին)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Գագիկ Ուդոյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովի նախագահին (Ն.Ալավերդյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների

մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալի պաշտոնակատարին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,**
**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

Восстановимая подпись

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099

X

Подписано: NIKOGHOSYAN BARSEGH 2808860099 **Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**

**Հավելված**
**Հայաստանի Հանրապետության**
**Արմավիրի մարզպետի**
**տեղակալի պաշտոնակատար,**
**մարզպետին փոխարինողի**
**2025 թվականի օգոստոսի 11-ի**
**N ՄՈ/785-Ա որոշման**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ն.Ալավերդյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

**Անդամներ՝**

Ս. Ղուկասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Ջ. Եղոյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

**Հանձնող՝**

Լ. Խրլակյան

«Ակնալճի Ա.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող

**Ընդունող՝**

Ե. Բաղդասարյան «Ակնալճի Ա.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ